

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Գալստյան**

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Կ-051-11.03.2019,15.04.2019-SՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները:

1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «22» թիվը փոխարինել «14» թվով:

2. Օրենքների նախագծերի փաթեթում ներառել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (կցվում է):

**ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 5-րդ մասում «Նոր» բառը փոխարինել «Օրենսգրքով նոր» բառերով և «վճարի դրույքաչափի բարձրացում» բառերը փոխարինել «Օրենսգրքով սահմանված վճարի դրույքաչափի բարձրացում» բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### Հոդված 2. Հարկային հարաբերությունների կարգավորումը

5. **Օրենսգրքով նոր** ~~Երբ~~ տեսակի հարկի կամ վճարի սահմանում, հարկի կամ ~~վճարի~~ **դրույքաչափի բարձրացում** **օրենսգրքով սահմանված վճարի դրույքաչափի բարձրացում** նախատեսող Հայաստանի Հանրապետության օրենքները կամ Հայաստանի Հանրապետության օրենքների նման դրույթները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից: